(ընհանուր աջակցություն/ընդհանուր օգնություն), Դուք պետք է դիմում ներկայացնել շրջանին Ձեր բողոքը բավարարելու նպատակով:

Եթե Դուք դժգոհ եք Լրացուցիչ ապահովության եկամուտի /Պետական լրացուցիչ ծրագրից, դիմեք Ձեր տարածքի Սոցիալական ապահովության գրասենյակ: Սոցիալական ապահովության գրասենյակը զբաղվում է ծերերի, կույրերի ու հաշմանդամների բողոքներով, և լսումներ անցկացնում դրանց շուրջ:

Թարգմանչական Ծառայություններ

Եթե դուք կամ Ձեր շրջապատից որևէ մեկը դժվարություններ ունի պետական օժանդակության դիմելու գործում Անգլերեն լեզվին չտիրապետելու պատճառով, դիմեք լեզուն իմացողի օգնությանը: Շրջանը պարտավոր է տրամադրել Ձեզ պարգմանչական ծառայություններ: Եթե Ձեր շրջանի սոցիալական ապահովության գրասենյակը չունի համապատասխան աշխատակից, ապա զանգահարեք 1-866-744-6241 համարով օգնություն ստանալու համար: Հեռախոսազանգնահատական անվճար է:

Ձեր Իրավունքները

Կալիֆորնիայում պետական օժանդակության դիմելիս Դուք իրավունք ունեք.

- ★ **Ձեր դիմումի վերաբերյալ ընդունված որոշման մասին գրավոր բացատրություն ստանալ,**
- ★ **Օժանդակության, նպաստների և ծառայությունների ծրագրում փոփոխությունների վերաբերյալ գրավոր բացատրություն ստանալ,**
- ★ **Բողոքարկել օժանդակությանը Ձեր համապասանելու, նպաստների և ծառայությունների ծրագրի ցանկացած որոշում,**
- ★ **Ծանոթանալ Ձեր կողմից շրջանին տրամադրված ծրագրին Ձեր համապատասխանելու վերաբերյալ ցանկացած տեղեկատվությանը: Դուք պետք է քննություն առնեք Ձեր գործը, եթե նպատակ ունեք դիմելու նահանգային լսումների (տես սույն գրքույկի ''Ձեր Անելիքները'' մասը),**
- ★ **Բողոքարկել եթե Ձեր նկատմամբ խտրականություն է դրսևորվել ռասայի, մաշկի գույնի, դավանանքի, սեռի, սեռական ուղղվածության ազգային ծագման, քաղաքական պատկանելիության, հաշմանդամության, ամուսնական կարգավիճակի կամ տարիքի հիման վրա,**
- ★ **Պահանջել Ձեր նկատմամբ բարեկիրթ, ուշադիր և հարգալից վերաբերմունք,**
- ★ **Բոլոր մյուս դիմորդների և օժանդակություն ստացողների հետ հավասար ուշադրություն և վերաբերմունք ստանալ առանց խտրականության ռասայի, մաշկի գույնի, դավանանքի, սեռի, սեռական ուղղվածության ազգային ծագման, քաղաքական պատկանելիության, հաշմանդամության, ամուսնական կարգավիճակի կամ տարիքի հիման վրա,**
- ★ **Ունենալ տեղեկություն Ձեր բոլոր արձանագրությունների մասին, որոնք պահվում են գաղտնի, բացի այն դեպքերից, երբ նահանգային և դաշնային օրենքներով այլ պայմաններ նախատեսված չեն,**
- ★ **Օգտվելանձնական գաղտնիությունից: Այնուամենայնիվ, Ձեզանից կպահանջվեն որոշ անձնական տվյալներ ծրագրին Ձեր համապատասխանելու և պետական օժանդակության կարիքը հաստատելու համար:**

Պետական օժանդակության համար դիմելիս կամ այն ստանալիս Ձեր իրավունքները պետք է հարգվեն բոլորի կողմից, ներառյալ շրջանի սոցիալական ապահովության բաժինները, կացարանները, մանկապարտեզները, աշխատանքային կամ մասնագիտական ուսուցման ծրագրերի անձնակազմը, բուժիմնարկները, հաշմանդամների համար նախատեսված հատուկ հաստատությունները, ինչպես նաև բժիշկներին, ատամնաբույժերին և դեղագործներին:

☎ Կալիֆորնիայի սոցիալական ծառայությունների գրասենյակում (CDSS) թույլ լսողությամբ անձանց համար նախատեսված է հատուկ հեռախոսակապ (TDD): Եթե Դուք բողոքում եք պետական օժանդակության վերաբերյալ կարող եք դիմել մեզ զանգահարելով թույլ լսողությամբ անձանց համար նախատեսված (TDD) 1-800-952-8349 համարով:

Ձեր Անելիքները

Եթե Դուք համաձայն չեք Ձեր դիմումի, պետական օժանդակության, նպաստների կամ ծառայությունների ծրագրի վերաբերյալ ընդունված որոշումների հետ, կարող եք դիմել հետևյալ որոշ կամ բոլոր քայլերին

1. Խորհրդակցեք Շրջանի Սոցիալական ապահովության գրասենյալի աշխատողներից մեկի հետ: Պարզաբանեք Ձեր անհամաձայնության պատճառները և օգնություն հայցեք:
2. Պաշտոնապես բողոքարկեք շրջանի որոշումը Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների գրասենյակի հետ: Դրա համար զանգահարեք կամ գրեք հանրային հարցումների և պատասխանների գրասենյակ:
   Public Inquiry and Response
   P.O. Box 944243, MS 6-23
   Sacramento, California 94244 - 2430
   Հեռախոս 1-800-952-5253 (ձայնային)
   1-800-952-8349 (TDD)
   ֆակս 1 -916-651-8866
   Նշեք, որ ցանկանում եք, որպեսզի Ձեր խնդիրը դիտարկվի որպես ''բողոք'' և պատճառաբանեք Ձեր ցանկությունը: Սոցիալական ծառայությունների գրասենյակը կտեղեկացնի շրջանի սոցիալական ապահովության բաժնին բողոքի վերաբերյալ և շրջանը կքննի Ձեր գործի փաստերը: Եթե շրջանը սահմանի, որ Ձեր գործը ենթակա է ճշգրտման, Ձեր բողոքը կկարգավորվի առանց Ձեր կամ սոց ծառայությունների գրասենյակի կողմից լրացուցիչ գործողությունների:
3. Պահանջեք նահանգային լսումներ վարչական իրավունքի դատավորի ներկայությամբ:
   ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ ՊԱՀԱՆՋԵՔ ՇՐՋԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ ՀԵՏՈ 90 ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ (ՈՉ 3 ԱՄՍՎԱ):
   Ինսուլն օր ժամանակաշրջանը վերաբերվում է նաև այն դեպքերին, եթե Դուք արդեն ներկայացրել եք բողոք: Ինսուլն օր ժամկետը սկսվում է այն պահին, երբ շրջանը ծանուցում է հղում Ձեր հայցի վերաբերյալ:
   Եթե Դուք ցանկանում եք նահանգային լսումներ հրավիրեք Ձեր օժանդակության կրճատման կամ կասեցման պատճառով, **Դուք միայն այն ժամանակ իրավունք ունեք նախքան լսումները նույն ծավալով օժանդակություն ստանալ, եթե լսումներ պահանջեք մինչև համապատասխան գործողության ժամկետը: Ձեր պարենային կտրոնները փոփոխություն չեն կրի մինչև Ձեր ներկա հավաստագրի ժամկետի ավարտը: Եթե լսումների որոշումը Ձեր օգտին չէ, Դուք կարող եք ստանալ հավելավճար հավելյալ կանխիկ օգնության տեսքով և պարենային կտրոնների արժեքի չափով այնքան ժամանակ, քանի դեռ Ձեր հայցը գտնվում է քննարկման փուլում:**
   Նաև կարևոր է պահպանել հայցի ծանուցման ծրարը վարչական իրավունքի դատավորին ներկայացնելու համար, քանի որ այս գործում ժամկետները կարևոր են:
   Նայանգային լսումներ հրավիրելու համար լրացրեք հայցի ծանուցման ձևի հետևում ''Նահանգային լսումների Հայտ'' բաժինը: Եթե բավարար չափով չեք տիրապետում անգլերենին , դիմեք մեզ նշելով Ձեր մայրենի լեզուն կամ բարբառը: Դուք կարող եք նամակ գրել բացատրելով շրջանի կողմից կայացված որոշման հետ Ձեր անհամաձայնությունը և նշելով թարգմանչի օգնության Ձեր կարիքը: Ղրեք լսումների հայտը շրջանի Սոց ապահովության գրասենյակ հայցի ծանուցման մեջ նշված հասցեով:
   Նահանգային լսումների հայտը կարող եք ներկայացնել նաը բանավոր զանգելով 1-800-952-5253 կամ 1-800-952-8349 համարով, եթե թույլ լսողություն ունեք: Զանգն անվճար է:

Նահանգային Լսումներ

Նահանգային լսումներն անց են կացվում Ձեր Կալիֆորնիայի Սոց ծառայությունների գրասենյակից վարչական իրավունքի դատավորի և շրջանի ներկայացուցչի ներկայությամբ: Դրանք դատական լսումներ չեն: Ձեր ցանկությամբ և Ձեր հաշվին կարող եք հրավիրել իրավապաշտպան կամ այլ ներկայացուցչի, ինչպես նաև վկաների: Վարչական իրավունքի դատավորը պատասխանատու է լսումների համար: Լսումներն անց են կացվում դռնփակ:

Լսումների ժամանակն ու վայրը

Լսումներից առնվազն տաս օր առաջ Կալիֆորնիայի Սոց ծառայությունների գրասենյակը նամակով կհայտնի Ձեզ լսումների ստույգ ժամանակը և վայրը: Որոշ շրջաններում Ձեզ կհայտնեն նաև լսումների ժամը իսկ այլ շրջաններում Ձեզ կտրամադրվի առավոտյան կամ կեսօրի ժամանակահատված:
Հիմնականում լսումները սկսվում են կամ առավոտյան 8:30 կամ կեսօրին 13:00: Քանի որ նույն ժամերին մեկից ավելի լսումներ են նշանակվում, Դուք պետք է կանխատեսեք Ձեր լսումների որոշ հետաձգում: Լսումների վայրում չկա երեխաների խնամքի համար ծառայություն:
Լսումները սովորաբար անց են կացվում շրջանի պետական շենքերում: Եթե Դուք չեք կարող մասնակցել լսումներին նրանց համար նախատեսված վայրերում, վատառողջ կամ հաշմանդամ լինելու պատճառով, ապա լսումները լարող են անցկացվել Ձեր տանը, որևէ նախապես համաձայնված վայրում կամ Ձեր համաձայնությամբ հեռախոսով: Լսումները տանը անցկացնելու համար հարկավոր է բժշկական վավերացում ներկայացնել. եթե Ձեզ համար անհրաժեշտ է, որպեսզի լսումներն անցկացվեն Ձեր տանը կամ հեռախոսով, զանգահարեք կամ գրեք նահանգային լսումների գրասենյակ պատճառաբանելու Ձեր որոշումը:

State Hearings Division
P.O. Box 944243 MS 19-37
Sacramento, California, 94244 - 2430
Հեռախոս 1-800-743-8525

Եթե Դուք նահանգային լսումներ հրավիրելուց հետո տեղափոխվել եք այլ բնակավայր, սակայն դա տեղի է ունեցել մինչ լսումների վերաբերյալ որոշում կայացնելը, Դուք պետք է Ձեր նոր հասցեն հայտնեք նահանգային լսումների գրասենյալի աշխատակիցներին զանգահարելով 1-800-743-8525 համարով: Զանգը անվճար է:

Եթե Դուք այլևս չեք հանդիսանում Կալիֆորնիայի նահանգի բնակիչ միջոցներ ձեռնարկեք Ձեր լսումները հեռախոսով անցկացնելու համար: Ձեզ նախապես ուղղություններ կտրամադրվեն լսումները հեռախոսով անցկացնելու ընթացակարգերի վերաբերյալ:

ՏԵՍԱԿԵՏԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Դուք իրավունք ունեք լսումներից առաջ ձեռէ բերել շրջանի տեսակետի հիմնավորման օրինակ: այն տպագիր հաղորդագրություն է, որը ներկայացնում է շրջանի կողմից Ձեր հանդեպ կիրառված գործողությունները և դրանց պատճառները: Կարող եք ստանալ այդ հաղորդագրությունը աշխատանքային ժամերին լսումների ժամկետից առաջ երկու աշխատանքային օրվա ընթացքում, քանի դեռ շրջանը չի զբաղվում Ձեր լսումներով: Կարող եք զանգահարել շրջանի Բողոքարկման բաժին տեղեկանալու թե արդյոք փաստաթղթերն արդեն պատրաստ են:
Եթե փաստաթղթերը պատրաստ չեն կամ եթե շրջանը էականորեն փոխել են փաստաթղթերը դրանք Ձեզ տրամադրելուց հետո, կարող եք այդ պատճառով հետաձգել լսումները: Դա նշանակում է որ Ձեր լսումները կտեղափոխվեն մեկ այլ ամսաթվի, իսկ Դուք կշարունակեք օգտվել ցանկացած օժանդակությունից մինչև լսումների վերսկսելը: Դուք կարող եք վերցնել հաղորդագրությունը շրջանի Սոց ապահովման գրասենյակի Բողոքարկման բաժնի աշխատակցից:
Լսումներին կարող եք նաև ներկայացնել գրավոր կարծիք բացատրելով առարկայի վերաբերյալ Ձեր դիրքորոշումը: Ձեր դիրքորոշումը պետք է հաշվի առնվի վարչական իրավունքի դատավորի կողմից: Շրջանի դիրքորոշման վերաբերյալ հաղորդագրությունը և Ձեր գրավոր կարծիքը կդառնան լսումների արձանագրության մաս և քննության կառնվեն վարչական իրավունքի դատավորի կողմից:

ԼՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԶԳՈՒՄ

Եթե ցանկանում եք հետաձգել Ձեր լսումները և եթե Ձեր լսումները ներառում են պարենային կտրոնների ծրագիրը, կարող եք պահանջել և ինքնաբերաբար ստանալ առաջին հետաձգումը: Մնացած այլ դեպքերում, եթե ցանկանում եք հետաձգել լսումները, պետք է նախապես տեղեկացնեք նահանգը և ներկայացնեք հետաձգման ծանրակշիռ պատճառներ: գրավոր հայտ ուղղեք նահանգային լսումների բաժին կամ զանգահարեք 1-800-743-8525 համարով (համարն աշխատում է ձայնային և թույլ լսողությամբ անձանց համար ռեժիմներով): Զանգնահատական անվճար է:

Եթե Դուք չեք ներկայանում նշանակված լսումներին, սակայն դեռ ցանկանում եք մասնակցել դրանց, Դուք պետք է հայտով դիմեք լսումների վերսկսման համար նշանակված լսումների ժամկետից հետո տասը օրվա ընթացքում, և համոզիչ փաստարկեևր ներկայացնեք նշանակված լսումներին չներկայանալու վերաբերյալ

ԼՍՈՒՄՆԵՐԻՑ ԱՌԱՋ

Եթե Դուք չեք ներկայանում նշանակված լսումերին, կամ լիազորեք որևէ մեկին Ձեր փոխարեն ներկայանալու համար: Եթե Դուք նախատեսում եք լիազորել որևէ մեկին Ձեր փոխարեն ներկայանալու լսումներին ապա նախքան լսումների համար սահմանված ժամկետի լրանալը հայտնեք Նահանգային լսումների գրասենյալի աշխատակիցներին Ձեր ներկայացուցչի անունը, հասցեն և հեռախոսահամարը: Կարող եք ձեռք բերել շրջանի իրավական ծառայությունների ներկայացուցիչների, իրավական ծառայություններ իրականացնող կամավորների կամ սոցիալական իրավապաշտպան կազմակերպությունների ցանկը: Պետք է նաև ստորագրեք լիազորագիր լիազորելու Ձեր կողմից ընտրված անձին Ձեր փոխարեն լսումներին ներկայանալու համար: Այդ լիազորագիրը պետք է հասցեագրվի շրջանին և Նահանգային լսումների գրասենյակ:

Դուք կարող եք ներկայացուցչի հետ միասին մասնակցել լսումներին, ինչպես նաև կարող եք հրավիրել գործին տեղյակ այլ անձանց ներկայացնելու վարչական իրավունքի դատավորին այն ամենը, ինչ իրենք գիտեն գործի առնչությամբ: Եթե Դուք ցանկանում եք, որպեսզի գործին կարևոր ալ անձինք կամ փաստաթղթեր ներկայացվեն լսումներին, Դուք պետք է ծանուցագրի հայտ ներկայացնեք: Մինչև լսումների ժամկետը ծանուցագիր պահանջելու համար գրեք կամ զանգահարեք Ձեր բնակավայրին ամենամոտ ներքոհիշյալ գրասենյակներ.

State Hearings Division
P.O. Box 944243
M.S. 19-44
Sacramento, CA 94244-2430
Հեռախոս (916) 229-4187

State Hearings Division
355 West Grand Ave.
Suite 4
Escondido, CA 92025-2649
Հեռախոս (760) 735-5070

State Hearings Division
Bay Area Regional Office
1515 Clay Street, #1203
Oakland, CA 94612
Հեռախոս (510) 622-4000

State Hearings Division
2550 Mariposa Mall,
#3088
Fresno, CA 93721
Հեռախոս (559) 445-5775

State Hearings Division
811 Wilshire Boulevard,
Suite 1118
Los Angeles, CA 90017
Հեռախոս (213) 833-2200

Կամ ներկայացրեք անհրաժեշտ փաստաթղթեր պատճառաբանելով դրանց կարևորությունը: Վարչական իրավունքի նախագահող դատավորը կահմանի, թե արդյոք ծանուցագիրը պետք է տրվի: Ծանուցված անձի կամ արձանագրության պահապանի հետ կապված բոլոր հարցերն ընկնում են Ձեր պատասխանատվության ներքո:

Դուք իրավունք ունեք լսումներից առաջ ծանոթանալու Ձեր գործին առնչվող արձանագրություններին և կարգադրություններին: Դրա համար անհրաժեշտ է զանգահարել Ձեր շրջանի Բողոքարկման բաժին:

ԼՍՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Եթե Դուք նախապես տեղեկացրել եք նահանգային լսումների գրասենյակը այն մասին, որ թարգմանչական ծառայությունների կարիք ունեք, ապա լսումներին ներկա կլինի նահանգի կողմից հատկացված թարգմանիչ աջակցելու Ձեզ և մյուս մասնակիցներին: Դուք պետք է պատրաստ լինեք լավագույնս ներկայացնելու Ձեր խնդիրը: Դուք ինարավորություն կունենաք ներկայացնելու վարչական իրավունքի դատավորին, թե ինչու համաձայն չեք շրջանի կայացած որոշման հետ, իսկ շրջանի ներկայացուցիչը հնարավորություն կստանա բացատրելու շրջանի որոշումը Ձեր գործի վերաբերյալ: Շրջանի ներկայացուցիչը պետք է ապացուցի կատարված գործողությունների արդարացիությունը: Դուք և շրջանի ներկայացուցիչը կարող եք հայցել որտեղ ինչպես միմյանց այնպես ել ներկա գտվող վկաներին: Վարչական իրավունքի դատավորը նունյպես կարող է հարցադրումներ կատարել իմի բերելու բոլոր փաստերը:

Նահանգի օրենսդրությունը նախատեսում է բոլոր լսումների ձայնագրում: Ձայնագրությունը օգտագործվում է վեճը կայացնելիս և կարող է պահպանվել այն դեպքերում, երբ վճռի շուրջ վեճ է ծագել:

ՎՃԻՌԸ

Լսումների ավարտից հետո վարչական իրավունքի դատավորը փոխանցում է որոշումը Կալիֆորնիայի Սոց ծառայությունների կամ առողջապահական ծառայությունների գրասենյակի տնօրենին, կամ էլ տնօրենի անունից վճիռ կայացնում եթե վճիռը ուղարկվում է տնօրենին, ապա տնօրենը քննության է առնում լսումների ժամանակ ներկայացված փաստերը, որից հետո կամ ընդունում է առաջարկված վճիռը կամ նշանակում է նոր լսումներ, կամ էլ սեփական վճիռ է ներկայացնում: Եթե տնօրենը ներկայացնում է իր վճիռը, այն գերակայող բնույթ է կրում: Այնուամենայնիվ Ձեզ կտրամադրվի վարչական իրավունքի դատավարի կողմից կայացված վճռի օրինակը: Վճիռը ստանալուն պես շրջանը պետք է անմիջապես ենթարկվի դրան, եթե նույնիսկ գործի առնչությամբ նոր լսումներ են հրավիրել: Եթե Ձեր գործը մերժված է, ապա ցանկացած օգնություն, որը ստացել եք լսումների շրջանում կկասեցվի: Ի լրումն դրան, շրջանը կարող է պահանջել լսումների ընթացքում Ձեզ վճարված հավելավճարի և պարենային կտրոնների փոխհատուցում:

Եթե Դուք համաձայն չեք լսումների կամ կրկնակի լսումների արդյունքուն ընդունված վճռի հետ, Դուք կարող եք դատական վերանայում պահանջել դիմելով գերագույն դատարան: Դատական վերնայման մասին հայտը պետք է ներկայացվի տնօրենի կողմից վճիռ կայացնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

ԼՍՈՒՄՆԵՐԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ

Նախքան տնօրենի կողմից վճիռը կայացնելը Դուք կարող եք ցանկացած պահին հրաժարվել նահանգային լսումների Ձեր հայտից գրավոր կերպով դիմելով Սակրամենտոյի Նահանգային լսումների գրասենյակ: Եթե Դուք նախորոք հրաժարվեք նահանգային լսումներից, ապա լսումները կկասեցվեն: Եթե Դուք լսումներիվ հետո հրաժարվեք, ապա Ձեր գործի առնչությամբ վճիռ չի կայացվի: Երկու դեպքում էլ ուժի մեջ է մտնում շրջանի որոշումը: Եթե Դուք ավելի բարձր մակարդակի օժանդակություն եք ստացել, քան պետք է ստանայիք նախքան լսումներ պահանջելը, և հետագայում հրաժարվում եք մինչև վճռի կայացումը, շրջանն իրեն իրավունք է վերապահում պահանջելու կանխիկ օժանդակություն կամ պարենյային կտրոնների գումարի փոխհատուցում: Այսինքն արդյունքը նույնն է ինչ այն դեպքում, եթե լսումների արդյունքուն շրջանի որոշումը պաշտպանվեր:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ ԵՆ

Լսումները զգալիորեն տարբերվում են միմյանցից: Վարչական իրավունքի դատավորը կարող ք ցանկություն հայտնել ծանոթանալու Ձեր գործին առնչվող փաստաթղթերին կամ արձանագրություններին: Դուք պետք է լսումներին ներկայացնեք արձանագրություններ, որոնք կհաստատեն կամ կմերժեն այն փաստերը, որոնց շուրջ Դուք և շրջանը անհամաձայնության եք եկել: Առանձնահատուկ վիճարկելի խնդիրներին վերաբերյալ արձանագրություններ հաճախ են պահանջվում ճիշտ վճիռ կայացնելու համար: Օրինակ

- Անշարժ գույքին վերաբերող այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են հարկային անդորրագրերը, ակտերը, պայմանագրերը և գրավաթղթերը:
- Անձնական սեպականությանը վերաբերող այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են բանկային գրքույկները, ապահովագրության վկայականները, մեքենայի սեփականատիրության մասին փաստաթղթեր, արժեթղթերը, պարտատոմսերը և պայմանագրերը:
- Հաշմանդամության վերաբերյալ այնպիսի փաստաթղթեր, ինչպիսին են բժշկական հաշվետվությունները, հիվանդանոցային արձանագրությունները կամ բժշկի գրառումները:
- Ձեր վաստակած դրամին վերաբերող այնպիսի փաստաթղթեր, ինչպիսին են աշխատավարձի կտրոնները, պարգևատրման նամակները, որոնք նշում են Սոց ապահովության գրասենյակից ստացված գումարի չափը; աշխատագրկության ապահովագրությունը, վետերանների նպաստները, դատարանի կողմից հաստված վճարումները, ուսանողների ֆինանսական օգնությունը, սեփականության վարձակալությունից գոյացած եկամուտները, արժեթղթերը, պարտատոմսերը , Ձեր անունից կատարված վճարումներըներառյալ պարգևները ը այլն:
- Բնակարանի կենցաղային ծառայությունների (ներառյալ հեռախոսակապ), բժշկական խնամքը (ներառյալ բժշկական ապահովագրությունը և բժշկական տեղավորումը), անդամավճարները, սպասավորների և երեխաների խնամքը, դպրոցի վճարումները և աղետներից և դժբախտ պատահարներից կորուստները:

Խտրականություն

Նահանգի օրենսդրության համաձայն սոցիալական ապահովության գործակալությունները իրավունք չունեն անտարբեր ծավալներով օժանդակություն, նապստներ կամ ծառայություններ մատուցել առանձին անհատներին կամ խմբերին հիմնվելով ռասայի, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության, դավանանքի, սեռի, սեռական ուղղվածության քաղաքական պատկանելիության կամ ամուսնական կարգավիճակի հիման վրա: Ֆեդերալ օրենսդրությունը նմանապես արգելում է խտրականությունը վերոհիշյալ մի շարք, թեև ոչ բոլոր հատկանիշների հիման վրա:

Նեդերալ օրենսդրությունը արգելում է (1) որդեգրման ենթակա երեխայի տեղավորման կամ խնամքի հետանձգումը կամ մերժումը որդեգրող կամ խնամակալող ծնողի կամ երեխայի ռասայի կամ ազգային ծագման հիման վրա; (2) որևէ անհատի խնամակալ կամ որդեգրող ծնող դառնալու հնարավորություններից զրկելը նրա կամ երեխայի ռասայի կամ ազգային ծագման հիման վրա:

Եթե Դուք խտրականության եք ենթարկվել սոց ապահովության գործակալության կողմից, Դուք կարող եք դիմել հետևյալ գործողությունների.

1. Խորհրդակցել շրջանի սոց ապահովության գրասենյակի քաղաքացիական իրավունքների ներկայացուցչի հետ: Շրջանը կքննի Ձեր բողոքը և կտեղեկացնի Ձեզ արդյունքի վերաբերյալ:
2. Խտրականության մասին էլեկտրոնային փոստով գրավոր կամ բանավոր կերպով բողոք ներկայացնել Կալիֆորնիայի սոց ծառայությունների գրասենյակ

   California Department of Social Services
   Civil Rights Bureau (CRB)
   P.O. Box 944243, M.S. 15-70
   Sacramento, CA 94244-2430
   Հեռախոս (916) 654-2107, անվճար 1-866-741-6241
   Էլեկտրոնային փոստի հասցե.

   կայքում գտեք հետևյալ crb@dss.ca.gov հասցեն Թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել (916) 654-2098 Հատուկ համարով (800) 688-4486 անվճար զանգի համար, Կալիֆորնիայի հերթապահ ծառայության օպերատորներին (800) 735-2929 համարով
3. Եթե Ձեր բողոքը վերաբերվում է պարենյային կտրոնների ծրագրին, ապա կարող եք խտրականության բողոք ներկայացնել ԱՄՆ Գյուղատնտեսության բաժին հետևյալ հասցեով.

   USDA, Director
   Office for Civil Rights
   Room 326-W, Whitten Building
   14th and Independence Avenue, SW
   Washington, D.C. 20250-9410
   1-800-795-3272 (ձայնային)
   (TTY) ՎՆ 202-720-6382
4. եթե Ձեր բողոքը վերաբերվում է աջակցության այլ ծրագրերի, քան պարենային կտրոնները, և եթե խտրականությունը դրսևորվել է ռասայի, ազգային ծագման, տարիքի կամ հաշմանդամության հիման վրա, Դուք կարող եք խտրականության մասին բողոք ներկայացնել ԱՄՆ առողջապահության բաժին հետևյալ հասցեով.

   US. Department of Health and Human Services
   Office for Civil Rights
   50 United Nations Plaza, Room 322
   San Francisco, CA 94102
   1-800-368-1019

Բողոքը պետք է ներկայացվի խտրականության դրսևորումից հետո 180 օրվա ընթաքում: Բողոքարկման մեջ նշեք խտրականության հիմքը (օրինակ ռասսա, հաշմանդամություն, սեռ), Ձեր կարծիքով կատարված գործողության պատճառը և դրա լուծման ցանկալի տարբերակը:

Եթե Դուք համաձայն չեք խտրականության բողոքի վերաբերյալ շրջանի որոշման հետ, ապա կարող եք բողոքարկել վճիռը Կալիֆորնիայի Սոց ծառայությունների գրասենյակում կամ ԱՄՆ Գյուղտնտեսության բաժնում, եթե այն ընդգրկվում է պարենային կտրոնների ծրագիրը: ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՈՂՈՔԱՀՏԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ Է ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՑ: Ի ԼՐՈՒՄՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԻ ՁԵՋ ԻՐԱՎՈՒՆՔ Է ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ՀՐԱՎԻՐԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ, ԵԹԵ ԴՈՒՔ ՎՍՏԱՀ ԵՔ ՈՐ ՇՐՋԱՆԸ ՁԵՐ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԽԱԼ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՐԵԼ:

Եզրակացություն

Եթե Դուք հարցեր ունեք սույն գրքույկում տեղ գտած տեղեկությունների վերաբերյալ (Ձեր իրավունքների կամ Ձեր նաելիքների վերաբերյալ, կամ եթե խախտվել են Ձեր իրավունքները), խորհրդակցեք Ձեր շրջանի սոցիալական ապահովության գրասենյալի կամ Կալիֆորնիայի սոցիալական ծառայությունների գրասենյալի հանրային հարցումների և պատասխանների և բաժնի աշխատակիցներից որևէ մեկի հետ:

Դուք կարող եք նաև շրջանի սոցիալական ապահովության գրասենյալից ձեռք բերել տվյալներ այն օժանդակության մասին, որի համար դիմում եք կամ որը ներկայումս ստանում եք: Եթե Ձեզ չի առաջարկվել նման տեղեկատվություն, ապա պահանջեք այն: **Որպեսզի վստահ լինեք, որ Ձեր հանդեպ արդար են վարվում, տեղեկացված եղեք, թե ինչ են Ձեզ պարտավոր տրամադրել:**

STATE OF CALIFORNIA
(ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ)

HEALTH AND HUMAN SERVICES AGENCY
(ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ՍՄՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ)

DEPARTMENT OF SOCIAL SERVICES
(ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ)

Այս տեղեկությունը մատչելի է խոշոր տպագրությամբ և ձայներիզով, և կարող ք Ձեր պահանջով տրամադրվել շրջանի կողմից:

Օժանդակության նպաստի կամ այլ ծառայությունների համար դիմելիս կամ դրանք ստանալիս տեղյալ պահեք շրջանը, եթե հաշմանդամ եք կամ օգնության կարիք ունեք

PUB 13 (Armenian) (3/07)

Եթե Դուք դիմում եք, ստանում եք կամ ստացել եք Կալիֆորնիայի պետական աջակցությունը, Դուք օգտվում եք հատուկ իրավունքներից:

Այս գրքույկը նկարագրում է Ձեր իրավունքները և բացատրում է Ձեր անելիքները այն դեպքում, եթե Դուք բողոք ունեք: Այս տեղեկատվոիթյունը վերաբերվում է այն անձանց, որքեր դիմում են, ստանում են կամ ստացել են օժանդակություն կամ ծառայություններ հետևյալ աջակցության ծրագրերի շրջանակներում:

Որդեգրման աջակցության ծրագիր (AAP)

Ալկոհոլի և թմրադեղերի դեմ պայքարի ծրագիր

Կալիֆորնիայի պարենյային աջակցության ծրագիր (CFAP)

Կալիֆորնիայի բժշկական առողջություն (Medi-Cal)

Կալիֆորնիայի աշխատանքի հնարավորություններ և երեխաների նկատմամբ պատասխանատվություն (CalWORKs)

CalWORKs Նպաստ աշխատանքի համար ծրագիր

Ներգաղթողների դրամական օժանդաության ծրագիր (CAPI)

Երեխաների սոցիալական ապահովության ծրագիր

Denti-CAL

Վաղ և համակարգված քննության ախտորոշում և բուժում (EPSDT)

Պարենային կտրոններ

Խնամակալության ծրագիր

Ընտանեկան աջակցության ծրագիր (IHSS)

Ազգակցության պահպանության աջակցության ծրագիր (Kin - GAP)

Հոգեկան առողջություն

Բազմանպատակ ապահովության ծրագիր (MSSP)

Անձնական խնամքի ծառայությունների ծրագիր (PCSP)

Փախստականների դրամական աջակցության ծրագիր

Սոցիալական ծառայություններ